ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 5(36), 31 մայիսի, 2021թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՀՀ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԱՅՑԸ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

Մայիսի 18-ին ՀՀ ոստիկանությունում պարեկային ծառայության ուսուցման ծրագրի շրջանակներում ՀՀ ոստիկանության կրթահամալիր էին ժամանել ՀՀ փոխվարչապետի պաշտոնակատար Մհեր Գրիգորյանը, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Քրիստինե Գրիգորյանը, ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Արա Ֆիդանյանը:

Հյուրերին դիմավորեց Կրթահամալիրի ղեկավար կազմը՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մուշեղ Բաբայանի գլխավորությամբ, և ոստիկանության գնդապետ Արթուր Ումրշատյանը:

Այցի ընթացքում հյուրերը հանդիպեցին ՀՀ ոստիկանությունում նոր ձևավորվող պարեկային ծառայության ուսուցման ծրագրի սովորողների հետ:

Հանդիպմանը փոխվարչապետի պաշտոնակատարը նշեց, որ բազմիցս ներկայացվել է ոստիկանության բարեփոխումների նպատակը, ռազմավարական միտքն ու նշանակությունը. «Մենք պետք է հստակ պատկերացնենք, թե դեպի ուր ենք գնում և ինչ առաքելություն ունենք՝ հավատալով մեր նպատակին»:

ՀՀ փոխվարչապետի պաշտոնակատարը պատասխանեց նաև ներկաներին հետաքրքրող մի շարք հարցերի, որոնց մեծամասնությունը պարեկային ծառայությունհասարակություն փոխըմբռնումների, սպասվող բարեփոխումների, օրենսդրական փոփոխությունների մասին էր:

Այցի ավարտին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանը ներկայացրեց պարեկային ծառայությանն առնչվող գործառութային պարտականությունները, դրանց առանձնահատկությունները և դասընթացների վերաբերյալ մի շարք մանրամասներ:

ԵՍ ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ՔՈՆՆ ԵՄ ՀԱՅՐԵՆԻ՛Ք՝ ԼՈՒՅՍԻԴ ՈՒ ՍԻՐՈՒԴ ՀԱՎԵՐԺՈՐԵՆ ՓԱՐՎԱԾ

Հայոց պետականությունը վերահաստատումն է հայոց ծխացող օջախների և հայկականության

Մեր ազգը, հանուն սրբություն սրբոց հայրենիքի, դարեր շարունակ անձնվիրաբար պայքարել, մարտնչել է, և անչափ որոշիչ դերակատարություն է ունեցել պետականությունը՝ ամենահզոր պատվարը մեր լինելիության, որի շնորհիվ խափանվել են նվաճողների քաղաքական նկրտումները:

Այսօր և ընդմիշտ պետք է արժևորենք մեր ազգային ամենաթանկ նվաճումը՝ ազատ, անկախ Հայաստանի Հանրապետությունը, որի համար ազգովի հավետ պայքարել ենք: Դարերի ընթացքում բազում փորձությունների միջով ենք անցել, սակայն չենք հուսահատվել, մաքառել ենք, արարել, և երբեք չի լռել հայոց հայրենանվեր երգը. այն անխորտակ է, քանզի հավետ իշխել է ազգային ինքնագիտակցությունը:

Մեր ազգի բարդ ու ողբերգական շրջադարձներով լի կյանքում, միևնույն է, բնավ չեն բեկվել մեր սրտերը, չի երերացել հարատևելու մեր կամքը: Եվ հազարամյակների ընթացքում մեզնից հափշտակված քաղաքներն ու գյուղերը, ոստաններն ու շեները և այդ ամենը խորհրդանշող, գերության մեջ հավերժ ծյունով ծածկված սրբազան Արարատ լեռը մշտապես մեր հոգում են եղել, մեզ ջերմություն պատգամել:

Մեր անմահացած հերոսներին հերթափոխել են արժանավոր ժառանգորդներ: Այդպես են ապրել՝ ազնիվ ու վեհապանծ գործերով, և հորդորել են մշտապես անդավաճան մնալ մեր ինքնությանը: Հույժ վճռական ժամերին, երբ կոչնակն է ահազանգել, ոտքի է ելել ողջ ժողովուրդը և պարտադրված մարտահրավերներն ընդունել արիաբար:

Հերոսանում էր զավակը հայոց: Հայրենյաց դրոշը վեհորեն ծածանելով՝ հաստատաքայլ գնում էր մահին ընդառաջ ու զոհվում՝ հանուն հայրենիքի հավերժության: Իրապես, այս սրբազան պայքարում արդարացի հաղթանակի հիմքը հայոց անընկճելի ոգին է, հիմնասյունը՝ մեր կարոտագին ու նվիրական սիրտը:

Հավե՞րժ մեր սրտերում եք, հայրենապա՛շտ որդիք՝ թաղված Եռաբլուրի եղբայրական գերեզմանոցում քսանհինգ տարի առաջ թե այժմ՝ մեր կողքին, խոնարհվում ենք Ձեր արիության, հոգու սխրանքի առջև:

Հայ ժողովուրդը մշտապես խրախուսել ու փառաբանել է իր զավակների անպարտելիությունը: Գրականության և արվեստի մեջ մարմնավորել են խիզախների կերպարները՝ վառ պահելով ու անմահացնելով նրանց հիշատակը: Ձոնվել են բանաստեղծություններ, բազում սրտառուչ երգեր են հյուսվել, կերպարվեստում ճախրող արծիվներն ու առյուծասիրտ որդիք խորհրդանշել են հայոց անմար ոգին:

Մեր ազգի նվիրյալ նահատակները հոգով ու սրտով իրենց երդվյալ հայրենապաշտ պապերի հետ էին, եկան այս աշխարհ՝ կորսված սրբություններն ու ազնվագույն արժեքները վերահաստատելու, ազգային ավանդույթներն ու ժառանգությունները պահպանելու, ոստաններ հիմնելու, տները մանկական կենսուրախությամբ լցնելու, նորատունկ այգիներ խնամելու և հայոց օջախները հավերժ վառ պահելու համար:

Այդ երախտավորների մեջ մշտապես ճառագում էր եղբայրության լույսը, որը ժառանգել ենք՝ այն հավետ պահպանելու հաստատակամությամբ:

Ձեր հոգին պատրաստ էր մարտահրավերներին դիմակայելու այնքան, որքան կպահանջվեր: Քաջե՛ր, դուք երբեք «քնով չանցաք»: Համայն հայոց աչքը ձեր ճամփին՝ ձեզ է սպասում, և դուք իրապես հայտնվում եք որպես Լույս և Սեր:

Հավետ կանգուն է մնալու մեր հայրենիքը՝ ազատ անկախ Հայաստանը, քանզի հայրենյաց պաշտպանությունը հայի համար միշտ եղել է ու կա անխախտ Սուրբ ուխտ:

Աննա Սարուխանյան
ոստիկանության կապիտան

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏ

Հովհաննես Բաղրամյանի ներդրումը հաղթական ճեռքբերումներում

Հովհաննես Քրիստափորի Բաղրամյանը ծնվել է 1897թ. դեկտեմբերի 2-ին հայ երկաթուղային բանվորի ընտանիքում, Ռուսական Կայսրության Ելիզավետպոլի (Գանձակի) նահանգի Չարդախլու գյուղում: Նույն գյուղում է ծնվել Համազասպ Խաչատուրի Բաբաջանյանը՝ ԽՍՀՄ զրահատանկային զորքերի գլխավոր մարշալը:

1915 թ. Հովհաննես Բաղրամյանը կամավոր ընդգրկվել է ռուսական բանակի Կովկասյան 2-րդ սահմանային գնդում՝ Ռուսաստանի էքսպեդիցիոն կորպուսի կազմում, և Առաջին համաշխարհային պատերազմի մեծ մասը կռվել է Կովկասյան ճակատում՝ Օսմանյան Կայսրության դեմ:

Հայկական բանակի կազմում մասնակցել է 1918թ. Սարիղամիշի և Կարսի տարածքում թուրքերի դեմ կռիվներին, ինչպես նաև Սարդարապատի հերոսամարտին՝ որպես դասակի հրամանատար:

1925 թ. ավարտել է Սանկտ Պետերբուրգի (Լենինգրադի) հեծելազորային դպրոցը, 1934 թ.՝ Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան: Այդ ընթացքում ծառայել է Հայաստանում տեղակայված խորհրդային զորքերում՝ էջմիածնում, Երևանում, Գյումրիում:

Մեծ է եղել Հովհաննես Բաղրամյանի ներդրումը նաև Հայրենական մեծ պատերազմում ձեռք բերված հաղթանակում: Հարկ է նշել, սակայն, որ Հայրենական պատերազմի ավարտից հետո ևս նա շարունակել է իր ներդրումն ունենալ ԽՍՀՄ զինված ուժերի զարգացման գործում: Բավական է նշել, որ 1955 թ.նշանակվել է ԽՍՀՄ պաշտպանության փոխնախարար և ստացել Խորհրդային Միության մարշալի կոչում: Նա նաև ԽՍՀՄ ԶՈՒ գլխավոր շտաբի ռազմական ակադեմիայի պետն էր և ԽՍՀՄ ռեզերվային ուժերի հրամանատարը: Զորացրվել է 1968 թվականին: ԽՍՀՄ կրկնակի հերոս է, պարգևատրվել է նաև Լենինի, Հոկտեմբերյան հեղափոխության շքանշաններով, Կարմիր դրոշի 3 շքանշանով, Սուվորովի 2 շքանշանով և Կուտուզովի շքանշանով:

Անդրադառնալով Սարդարապատի հերոսամարտի հաղթանակում Մարշալ Բաղրամյանի ներդրմանը՝ հարկ է նշել, որ այդ ժամանակ Բաղրամյանն ուներ լեյտենանտի կոչում և մի քանի ճակատամարտերում արդեն հաղթել էր թուրքական զորքերին՝ մասնակցելով նրանց դեմ հայկական կամավորականների կազմած ջոկատների կռիվներին՝ ռուսական բանակի կազմում:

1918թ. գարնանը ռուսական բանակի կովկասյան զորամիավորումները ցրվում են և հեռանում կովկասյան ռազմաճակատից: Թուրքերի դեմ պայքարում մնում են ոչ մեծ հայկական և վրացական զորամիավորումներ: Անդրկովկասում արագ ձևավորվում են հայ-

▶ 3

ԱՐԺԱՆԻ ՊԱՐԳԵՎՆԵՐ
ԻՄ ՀԵՐՈՍԸ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի առաջին կուրսի սովորողների շրջանում անցկացված «Իմ հերոսը» թեմայով շարադրությունների մրցույթում հաղթող է ճանաչվել Կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի վճարովի ուսուցման սովորող Լիլիթ Մինասյանը: Երկրորդ մրցանակային տեղն զբաղեցրել է քոլեջի սովորող Սիսակ Գալստյանը, իսկ երրորդ տեղը հավասար կիսեցին Անդրանիկ Հանեսյանը և Դիանա Գրիգորյանը: Կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանը մրցույթում հաղթած սովորողներին գրքեր նվիրեց:

Ստորև ներկայացնում ենք մրցույթում հաղթած շարադրությունը:

Երկրագնդի վրա փոքրիկ մի կետ կա, որ ամեն անգամ քարտեզի վրա տեսնելիս անպայման մատս սահեցնում եմ վրայով, որ զգամ պահանջատիրական մղումներս ու այս մեծ աշխարհում պարտավորեցնող փոքրիկ գոյությունս:

Դարերի պատմություն ունի Արցախ աշխարհը, հինավուրց ու ողբերգություններով լի անցյալ: Ստեղծող ու կառուցող իմ ժողովուրդը պատերազմել է անգութ ու դաժան թշնամիների դեմ՝ հանուն ազատության ու անկախության, հանուն հավատի, գոյատևման և ապագայի: Արյունոտ իր ճանապարհին բազում հերոսներ է ծնել մեր ժողովուրդը, որոնք իրենց կյանքն ու երջանկությունը զոհել են հանուն ազգի ու հայրենիքի փրկության: Մեր երկիրն այսօր ամենից շատ իրական հայրենասերների կարիք ունի: Հայրենիքի հանդեպ սերն ու նվիրվածությունն է, որ հերոս է ծնում:

Արցախյան երրորդ պատերազմը վկայությունն է այն իրողության, որ մենք ունենք ուժեղ տղաներ, ովքեր հայրենիքի պաշտպանության համար պատրաստ են կռվելու մինչև վերջին կաթիլ արյունը:

Իմ հերոս եղբայրը՝ Արման Մաշուրյանը, մեկն էր այն խիզախ տղաներից, ովքեր կռվեցին մինչև վերջին փամփուշտը՝ չխնայելով սեփական կյանքը:

Ժամկետային զինծառայող, ավագ սերժանտ Արման Արմենի Մաշուրյանը քաջաբար կռվեց Հադրութում, Մարտունիում, հերոսացավ Քարին տակի պաշտպանության մարտերում, վիրավորվեց ու արնաքամ եղավ՝ Շուշին պահելու հավատով...

Նրա մեկուկես տարվա զինվորական կենսագրությունը մարդու, քաղաքացու, հայրենիքի նվիրյալ զինվորի մի ամբողջական հերոսապատում է:

Արմանն անվախ մարտիկ էր, հայրենաշունչ հայորդի, քաջազուն հրամանատար: Նայում եմ նրա լուսանկարին, գրում եմ այս տողերը, կոկորդս սեղմվում է, իսկ արցունքներս ակամայից գլուր-գլուր թափվում են: Մտածում եմ, որ գարնանն Արմանի արյունից սնվող երիցուկներ դուրս կգան բերդաքաղաքի պարիսպների տակ, արյունահոտ երիցուկներ և շշուկով կասեն.

-Վե՞ր կացեք, տղե՞րք...

Արմանի մոր աչքերում անսահման տխրություն կա. թեև որդու հետ մեծ հույսեր էր կապել ու ոչ մի կերպ չի կարողանում համակերպվել կատարվածի հետ, բայց հպարտությամբ է խոսում նրա մասին: Միակ սփոփանքն այն է, որ որդին զոհվել է որպես հերոս:

Արմանն այն հերոս տղաներից է, որ մի քանի ամսվա ընթացքում դարձավ մեր պատմության առասպելածին զավակներից մեկը: Նրանք իրենց անկատար երազանքներով մի նոր կյանքի սկիզբ ավետեցին՝ օրինակ ծառայելով և հայրենասիրություն սերմանելով գալիք սերունդների մեջ:

Ինչքա՜ն անավարտ երազանքներ ու չփարատված կարոտներ թողեցիք ձեզնից հետո, տղե՜րք...

Հիմա մենք ձեզ որտե՞ղ փնտրենք:

Դուք միշտ կմնաք մեր սրտերում, բայց մենք միշտ էլ կարոտ կմնանք ձեր աչքերի փայլին, բարի ժպիտին ու ձեռքերի տաք ափերին:

Ես հույս ունեմ, որ այլևս ոչ մեկը չի զգա որդու, սիրած տղայի, ամուսնու, եղբոր, ընկերոջ ու հոր կարոտի ցավը: Հուսով եմ, որ կկարողանանք հանգիստ քնել ու չենք վախենա կորցնել մեր սիրելիներին: Երազում եմ, որ բոլոր երեխաները քնեն հարմարավետ մահճակալներին, այլ ոչ թե սառը նկուղներում՝ մտածելով, որ ապրում են իրենց կյանքի վերջին րոպեները: Հուսով եմ, որ երբեք չենք լցնի մեր աչքերը հրաժեշտի արցունքներով, չենք տեսնի ավեր քաղաքներ, կարոտով չենք նայի մեր հարազատների աչքերին՝ մտածելով, որ գուցե վերջին անգամ ենք նրանց տեսնում:

Ես դեռ հավատում եմ հրաշքների...

Մինասյան Լիլիթ
ակադեմիայի 1-ին կուրս, 1-ին խումբ

ՀԱՍՏԱՏՈՒՆ ՔԱՅԼԵՐՈՎ ԴԵՊԻ ԵՐԱԶԱՆՔԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ

«Կրթահամալիրի սովորողները» խորագրով նոր նախագծի շրջանակում այս անգամ զրուցել ենք ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի առկա անվճար ուսուցման 4-րդ կուրսի 2-րդ դասակի սովորող Լիլյա Հովակիմյանի հետ: Ի դեպ, Լիլյան 2019 թ. Կրթահամալիրի լավագույն սովորող է ճանաչվել:

Գնացինք....

-Խոսենք մանկությունից: Ինչպիսի՞ աղջնակ էիր, ի՞նչ երազանքներ ու հեքիաթներ կային մանկության տարիներին:

Հրաշալի մանկություն եմ ունեցել: Զարմանալի է, բայց ինձ բավականին վաղ տարիքից եմ հիշում: Մանկության տարիներին շատ աշխույժ, քմահաճ, ուզածին ամեն կերպ հասնող, ուշադրություն սիրող ու թիթիզ եմ եղել (ասում են՝ բան չի փոխվել): Մանկությանս թանկ հուշերն են՝ բակում ընկերների հետ խաղերը, պապիկիս հետ զբոսանքները, Ձմեռ պապիկին ուղարկած նամակները, տիկնիկներն ու հեծանիվը, երգերն ու ոտանավորները... Ինչպես յուրաքանչյուր աղջնակի այդ տարիքում, ինձ էլ գրավում էին հեքիաթներն ու մուլտֆիլմերը՝ արքայադուստրերի, գեղեցիկ զգեստների եւ պարահանդեսների մասին: Թվում էր՝ կյանքը հենց դա է, որ կա: Կարդացածս գրքերի ազդեցության տակ որոշել էի դառնալ դերասանուհի, նկարահանվել գեղարվեստական ֆիլմերում ու մարմնավորել սիրելի գրքերի սիրելի հերոսուհիներին: Սա հիշում եմ որպես մանկության գեղեցիկ ու անհրաժեշտ երազանք:

-Դպրոց. նոր, ավելի հասուն կյանք: Ինչպիսի՞ն էին դպրոցական տարիները: Ի՞նչ կհիշես, կպատմե՞ս այդ տարիներից:

Դպրոցական տարիներից չեմ հիշում գեթ մեկ օր, որ տրտնջալով գնայի դպրոց: Անչափ սիրում էի դպրոցս, դասընկերներիս ու ուսուցիչներիս: Դասարանի ավագն էի, մեծ սիրով ու ամենայն պատասխանատվությամբ էի կատարում բոլոր կազմակերպչական աշխատանքները՝ ջանալով, որ մեր դասարանը բոլոր հարցերում լինի լավագույնը: Հիշում եմ, թե ինչ մեծ ոգևորությամբ էի մասնակցում բոլոր առարկաների շրջանակներում կազմակերպվող օլիմպիադաներին: Սովորել եմ գերազանց, բայց զերծ չեմ մնացել և ոչ մի աշակերտական չարաճճիությունից՝ արտագրելուց, դասից փախչելուց, ինչպես նաև ուսուցիչների դիտողություններից՝ դասի թեման դասընկերներիս հուշելու կամ դասի ընթացքում ծածուկ շատախոսելու առումով: Հետո եկան ավելի հետաքրքիր՝ ուսանողական տարիները. լավագույն ընկերներ, մասնագիտական կրթություն ու 3 անմոռանալի տարիներ:

-Փոքրիկ իշխան. Անտուան դե Սենտ-Էկզյուպերի... Ինչպիսի՞ն է քո ստեղծած այլ մոլորակը.

Կարծում եմ՝ ես չափից շատ ռեալիստ եմ Ձեր հարցին պատասխանելու համար, ես մշտապես գտնվում եմ Երկիր մոլորակի վրա: Գիտե՞ք, երկա՜ր մտածեցի էս հարցի շուրջ, հասկացա՛, որ ես էս կենցաղից շատ հեռու: Կոնկրետ ասել, թե որ գիրքն եմ առաջինը կարդացել, չեմ կարող: Սկսել եմ կարդալ հայ գրականություն, ինձ մեղավոր կզգամ, եթե նշեմ (չեմ էլ կարող նշել) ամենասիրելի մեկ գիրք կամ հայ գրականությունից մեկ հեղինակի, սահմանափակվեմ միայն ասելով, որ իմ գրադարանի գրքերի մեծ մասը պատկանում են հայ հեղինակների գրչին: Թեպետ առաջին կարդացածս գիրքը չեմ հիշում, բայց շատ լավ եմ հիշում, թե որ գիրքը բացառիկ տպավորություն թողեց ինձ վրա. դա Օնորե դը Բալզակի «Հայր Գորիոն» էր, ինչից հետո սկսեցի կարդալ այս հեղինակի բոլոր ստեղծագործություններն ու կարդալուց հետո դեռ մի քանի օր էլ վերլուծել դրանք: Ընթերցանությունն ինձ համար կարճատև, հաճելի ու երբեմն անհրաժեշտ փախուստ է միապաղաղ իրականությունից. այն պահերին, երբ ինչ-որ բանում չեմ կողմնորոշվում, կարդում եմ: Կարդալը տրամադրություն է ստեղծում, ուղղորդում դեպի լավն ու դրականը:

-Հայտնի է՝ առաջին կին ոստիկանը եղել է ամերիկուհի էլիս Ուելսը 1910 թվականին: Նա բազում քննադատությունների է արժանացել ընտրած մասնագիտության պատճառով, բայց անխոնջ կատարել է իր ծառայությունը: Դու ինչպե՞ս ընտրեցիր այս մասնագիտությունը:

Վերահաստատում եմ Ձեր պնդումն առ այն, որ մասնագիտության ընտրությունը յուրաքանչյուրիս կյանքում բարդ ու շատ կարևոր փուլ է: Այս ընտրությանը պետք է մոտենալ ամենայն լրջությամբ, չէ՞ որ մեր մասնագիտությանն ու աշխատանքին մենք տրամադրելու ենք անվերադարձ հոսող ժամանակի մեծ մասը, մեր ներուժն ու ուշադրությունը: Դպրոցական տարիներին արդեն մտածում էի իրավաբանի մասնագիտությունն ընտրելու մասին, ծնողներս ողջունեցին այդ միտքը: Բուհն ընտրել եմ մայրիկիս առաջարկությամբ: Երկար ժամանակ ուսումնասիրեցի, տնտղեցի, վերլուծեցի, մի քանի անգամ այցելեցի Կրթահամալիր, ծանոթացա սովորողներից ոմանց հետ, հետաքրքրվեցի, թե ինչպես են անցնում դասերն ու առօրյան: Վերջապես կայացրի այդ կարևոր ու երջանիկ որոշումը. 2017թ. ես դարձա Կրթահամալիրի ակադեմիայի սովորող: Հիմա հպարտությամբ հասկանում ու փաստում եմ, որ դա ոչ թե միայն համազգեստի հանդեպ ակնածանքի արդյունք էր, այլ երկար մտածված, ծանրութեթև արված և գիտակցված որոշում:

- Այնուամենայնիվ, ոստիկանի աշխատանքը և՛ռիսկային է, և՛ պատասխանատու: Ինչպիսի՞ դժվարությունների ես բախվել այս տարիների ընթացքում:

Ոստիկանության կրթահամալիր ընդունվելով՝ փաստացի ես ընդամենը մեկ քայլ կատարեցի, բայց այդ մեկ քայլն արմատապես փոխեց կյանքս. երբեմնի ազատ ու անհոգ կյանքը միանգամից փոխարինվեց մեծ պատասխանատվություն պահանջող, հստակ կանոնակարգված, որակապես նոր կյանքի: Արդեն լավ սովորող լինելը բավարար չէր, դրան զուգահեռ՝ պետք էր լինել նաև բարեխիղճ ծառայող, և այս ամենը համադրելն սկզբնական շրջանում ինձ հեշտ չէր տրվում: Եղել են, իհարկե, բազմաթիվ դժվարություններ, բայց դրանք մոռացվում են, մնում են միայն լավ հուշերն ու այդ դժվարությունների տված օգուտները: Կրթահամալիրը սովորեցրեց ոչ միայն դիմանալ, այլև հաղթահարել ցանկացած դժվարություն, դառնալ ու մնալ ուժեղ, չընկճվող, քանի որ ոստիկանական համակարգը չի հանդուրժում թույլերին:

- Ուսանողական տարիներ. ինչպիսի՞ն է Կրթահամալիրում ուսանողական կյանքը:

Կրթահամալիրում ուսանողական կյանքը շատ է տարբերվում մյուս բուհերի ուսանողական կյանքից: Պատճառն այն է, որ Կրթահամալիրում մենք ուսանող լինելուց զատ նաև ոստիկանության ծառայողներ ենք, համազգեստ ու ուսադիր ենք կրում, համարվում ոստիկանական համակարգի մի մասնիկ: Ժամանակի սղության պատճառով շատ հաճախ հետին պլան են մղվում զվարճանքներն ու ուսանողական ժամանցը: Այնուամենայնիվ, ես իմ փորձով վստահ փաստում եմ, որ Կրթահամալիրում ևս հնարավոր է ունենալ անմոռանալի ուսանողական կյանք, այնպիսին, ինչպիսին երբեք չի կարողանա ունենալ այլ բուհի ուսանողը:

- Ոստիկանական համակարգն ուժային կառույց է, բայց կինը նուրբ էակ է, այս հակասություններն ինչպե՞ս ես կարգավորում:

▶ 3

ԿԱՅԱՑԱՎ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՔՐԵԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԸ

Մայիսի 21-ին անցկացվեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնին կից գիտական խմբակի 2020-2021 ուսումնական տարվա անդրանիկ նիստը՝ գիտական զեկույցի ներկայացման ձևաչափով:

Զեկույցներով հանդես եկան Ակադեմիայի բակալավրիատի առկա անվճար 3-րդ կուրսի սովորողները՝ Արևիկ Հարությունյանը՝ «Քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալը կամ ստանալը կամ պահպանելը», Գնել Կիրակոսյանը՝ «Քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելը կամ ղեկավարելը», Հակոբ Քոչարյանը՝ «Քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելը կամ ներգրավելը», Սերոբ Ազատյանը՝ «Քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելը» թեմաներով: Զեկույցների ղեկավարն ամբիոնի դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ Հ.Սմբատյանն էր:

Զեկույցների ներկայացումից հետո տեղի ունեցավ ակտիվ քննարկում:

ՀԱՍՏԱՏՈՒՆ ՔԱՅԼԵՐՈՎ ԴԵՊԻ ԵՐԱՁԱՆՔԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ

2 ◀ Ոստիկանությունում աշխատելու համար մենք սովորում ենք ճիշտ ու դիպուկ կրակել, արագ վազել, վնասազերծել հանցագործին, բայց, միևնույն է, կնոջ ամենահզոր զենքը մնում է կանացիությունը: Այս ամենը ոստիկանության համակարգում հայտնվելու առաջին իսկ օրվանից ես փորձել եմ դիտել ոչ թե հակասության, այլ փոխլրացման հարթությունում: Ուժային կառույցում աշխատելուն կնոջը կարող է խանգարել իր կատարած աշխատանքում ոչ պրոֆեսիոնալ լինելը, այլ ոչ թե կանացի նրբությունը: Կանայք ի ծնե ավելի հեշտ են հաղորդակցվում ցանկացած անձի հետ, ավելի հեշտ են հանգուցալուծում կոնֆլիկտներն իրենց հենց այս հատկանիշի շնորհիվ: Ոչ մի, անգամ ամենաբարդ մասնագիտությունը չի կարող խանգարել կնոջը լինել գեղեցիկ ու խնամված, իսկ օրինակ՝ կոկիկ մատնահարդարումը չի կարող կին օպերատիվ աշխատակցին խանգարել արագ արձագանքելու հանցագործության դեպքին (ծիծաղում եմ):

- Ինչպիսի՞ն պիտի լինի իրական ոստիկանի կերպարը:

Ոստիկանը պետք է լինի բանիմաց, տիրապետի իր մասնագիտության բոլոր նրբություններին, լինի հայրենասեր ու մարդասեր, իր ծառայությունն անցկացնի անձնուրաց, լինի ուժեղ ու պատրաստված, հանդուրժող ու չչարացող, կարգապահ, ազնիվ ու, որ շատ կարևոր է, իր գործին նվիրված: Այս հատկանիշները ես ուղղակի չթվեցի, ես նկարագրեցի շատ ու շատ ոստիկանների, ովքեր ոստիկանի կերպարի արժանի ձևավորողն են:

- Ի՞նչ խորհուրդ կտաս նրանց, ովքեր ցանկանում են ոստիկան դառնալ:

Հատկապես ընդունելության շրջանում ինձ հաճախ են դիմում անձինք, ովքեր ցանկանում են համալրել ոստիկանության շարքերը, դառնալ իմ սիրելի Կրթահամալիրի սովորող: Նրանց ցանկությունը ողջունելուց և հետաքրքրող հարցերին պատասխանելուց հետո անպայման խորհուրդ եմ տալիս հասկանալ ու ամբողջությամբ գիտակցել ոստիկան լինելու բարձր պատիվն ու պատասխանատվությունը, գալիք անխուսափելի դժվարությունները, պատրաստվել դրանց, ձևավորել հստակ նպատակ, ձգտել դեպի այդ նպատակն ու, իհարկե, հասնել դրան:

Բլից հարցեր
Պատասխանում ենք կարճ և արագ

-Երեք բառ, որով կբնորոշես ինքդ քեզ:
Նպատակասլաց, չհանձնվող, հավատարիմ:

-Սիրածդ աֆորիզմը:
«Պահպանել հավատարմությունն արժանիք է, ճաշակելը՝ պատիվ»:

-Սիրելի զբաղմունքդ:
Ճամփորդել:

-Խորհուրդ, որը կտայիր...
Վայելել կյանքը. այն մեկ անգամ է տրվում ու անասելի արագ է անցնում:

-Դու կին ոստիկան ես և...
Ես կին ոստիկան եմ, ով ձգտում է լինել լավ մասնագետ ու կատարել հանրօգուտ աշխատանք պետության և հասարակության համար:

Հարցազրույցը վարեց
ոստիկանության ավագ լեյտենանտ
Մարիետա Խերանյանը

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏ

1 ◀ կական և վրացական կամավորական գնդեր մեկ նպատակի համար՝ թուրքական հարձակումներից պաշտպանել Անդրկովկասը: Թուրքերը, իմանալով ռուսական զորքերի հեռանալու մասին, լայնածավալ հարձակման են անցնում Անդրկովկասում և 1918թ. գարնանը գրավում են Էրզրումն ու մոտենում Սարեղամիշին: Թուրքերը գրավում են նաև Բաքումը և մի շարք այլ ռազմավարական կարևորության կետեր, այդ թվում՝ Կարսի անառիկ բերդը, և աննկատ մտնում ու դիրքավորվում են Սարդարապատ գյուղում: Թուրքերի նպատակն էր օգտվել ստեղծված իրավիճակից և գրավել ողջ տարածաշրջանն ու կովկասյան թաթարների հետ ստեղծել միասնական պետություն: Նրանց ծրագրում կար նաև գրավել Արևելյան Հայաստանը և մեկընդմիշտ վերջ դնել հայ ժողովրդի գոյությանն ու հայկական հարցին: Այս ընթացքում հայկական զորամիավորումները տեղյակ չէին, որ թուրքերն արդեն ներխուժել են Սարդարապատ, և Հովհաննես Բաղրամյանին հանձնարարական է տրվում 4-5 հեծյալներ վերցնել, Սարդարապատի միջով անցնել դեպի նրա արևմտյան ծայրամասն ու հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզել իրավիճակը՝ ինչքան թուրքական զորք կա առջևում, և ինչ ուղղություններով կարող են հարձակվել: Բաղրամյանը, վերցնելով իր դասակից 5 հեծյալի, սլանում է դեպի Սարդարապատ: Սարդարապատ մտնելու համար կար մեկ գլխավոր ճանապարհ, որը տանում էր քաղաքի կենտրոն, և կամարաձև մուտքով պետք է անցնեին հայկական մի քանի հեծյալներ և հասնեին նշված վայրը: Երբ հայկական հեծյալները Բաղրամյանի գլխավորությամբ մտնում են քաղաքի կենտրոնական փողոց, այդ ժամանակ նրանց դեմ դուրս է գալիս ռուսական զորքերի համազգեստով թշնամու հետևակային մեկ դասակ (համազգեստը ձեռք էին բերել գյուղում մնացած ռուսական պահեստներից): Տեսնելով հայկական հեծյալներին, որոնք ևս կրում էին ռուսական բանակի համազգեստ, կանչում են նրանց՝ ասելով՝ անցե՛ք, անցե՛ք, արա՛գ անցեք: Բաղրամյանն իջնում է ձիուց, քանի որ համոզված էր, որ դրանք իրենց զորամիավորումներից էին, և խաչակնքվում է: Թուրքերն սկսում են կրակել Բաղրամյանի վրա, սակայն չեն դիպչում, վիրավորում են միայն ձիուն, ինքը բղավելով հրամայում է մյուսներին հետ գնալ, իսկ ինքը թաքնվում է մոտակա թմբի հետևում: Շրջանցելով թուրքերին՝ Բաղրամյանը կարողանում է վերադառնալ յուրայինների մոտ, որոնք արդեն կտրել էին հույսները, որ Հովհաննեսը կգա: Հրամանատարը, տեսնելով նրան, ձեռքը դնում է ուսին ու ասում՝ ոչի՛նչ, պատահում է:

Գեներալ Սիլիկյանի տաղանդի և վճռականության շնորհիվ ստեղծվեց Սարդարապատ ջոկատը, որը պետք է դիմավորեր թուրքերին Արարատյան դաշտում և հետ շպրտեր նրանց: Նա Բաշ Ապարանի ուղղությամբ ուղարկեց համանուն ջոկատը, որը պետք է այդ ուղղությամբ կասեցներ թուրքերի առաջխաղացումը: Ձախ թևում առանձնացրեց հատուկ զորաջոկատ, որը պետք է կասեցներ Արաքսի կողմից թուրքերի ներխուժումը: Բոլոր հնարավոր ուղղություններով թուրքական բանակի դեմ ուղարկելով զորաջոկատներ՝ գեներալ Սիլիկյանն ստեղծեց մի իրավիճակ, որով թուրքերը կմտածեին, թե հայկական ուժերը մեծաթիվ են, և ստիպված կլինեին նահանջել: Այս տակտիկական հնարքն աշխատեց: Սարդարապատ ջոկատին հանձնարարված էր միայն հարվածել և հնարավորության դեպքում հետապնդել թուրքերին: Մայիսի 22-ին Դանիել Բեկ Փիրումյանի գլխավորությամբ հայկական զորամիավորումները Սարդարապատ ջոկատի ուժերով անցան հարձակման: Նույն օրը երեկոյան հայկական ջոկատը գրավեց Սարդարապատ գյուղն ու կայարանը: Չխորանալով Սարդարապատի հաղթանակի այլ պատմական իրողությունների մեջ՝ նշենք, որ Բաղրամյանն այդ ընթացքում գտնվում էր Սարդարապատ ջոկատի կամավորական ջոկատում, որտեղ հրամանատարն էր Պավել Բեկ Փիրումյանը՝ Դանիել Բեկ Փիրումյանի եղբայրը: Ինչպես Սարդարապատում տեղի ունեցածից, այնպես էլ հետագա ողջ ընթացքում Հովհաննես Բաղրամյանը, լինելով նաև տեղանքին քաջածանոթ (նախապես ուսումնասիրել էր տեղանքը դեռև 1915թ.), արժեքավոր տեղեկություններ է փոխանցում ոչ միայն Սարդարապատ ջոկատին, այլև մյուս ուղղություններով կռվող ջոկատներին, և արդյունքում՝ հայկական ուժերը մի քանի ուղղություններով հաղթանակներ են տոնում: Իր գրավոր հուշերում Հովհաննես Բաղրամյանն ամենայն մանրամասնությամբ հիշում և պատմում է Սարդարապատի հերոսամարտի մասին ու նշում. «Ամեն անգամ, երբ գնում էի Սարդարապատ, այցելում էի այն վայրը, որտեղ թուրքական հետևակային ջոկատը կրակեց ինձ վրա»:

Իրավամբ մեծ է Հովհաննես Բաղրամյանի ներդրումը հայ ժողովրդի համար կենցաղահու կռվի՝ Սարդարապատի համար ձեռք բերված հաղթանակում: Այս հաղթանակը կոփեց քաջարի հայ ռազմիկին, որը դեռ երկար ճանապարհ ուներ անցնելու...

Տիգրան Խաչատրյան
ոստիկանության կապիտան

ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԷՔՍԿՈՒՐՍԻԱ

Սույն թվականի մայիսի 16-ին լեզուների ամբիոնի կազմակերպած բազմաբովանդակ և հետաքրքիր հերթական միջոցառումը զուգադիպեց ուսանողության ու երիտասարդության օրվան, որն էլ դարձավ յուրօրինակ ուխտագնացություն դեպի Հայաստան աշխարհի ամենագեղատեսիլ անկյուններից մեկի՝ Դիլիջանի հոգևոր-մշակութային կենտրոնները՝ Գոշավանք, Հաղարծին, իսկ վերջում՝ Սևանի թերակղզի: Ինչ խոսք, հայրենասիրությունն սկսվում է հայրենաճանաչողությունից: Այդ օրն իրավագիտության ֆակուլտետի 25 սովորող հնարավորություն ունեցավ Գոշավանքում առնչվելու այն ամենին, ինչ հիշեցնում էր մեծ օրենսդիր Մխիթար Գոշին: Նրանք հարգանքի տուրք մատուցեցին Մխիթար Գոշի դամբարանին, լսեցին վանքի հոգևոր հովվի սրտառուչ խոսքը և ստացան նրա օրհնությունը: Սովորողներին հատկապես շատ դուր եկավ Հաղարծինի շքեղաշուք տեսքը, նրա անզուգական դիրքը, բնությունը՝ իր զմրուխտյա հանդերձով: Բնության գրկում լուսանկարվեցին, հանգստացան, իսկ ուշ երեկոյան վառ տպավորություններով վերադարձան Երևան:

Տարիներ հետո նրանք կավարտեն բուհը, ճակատագիրը նրանց կցրի տարբեր կողմեր, բայց այդ օրվա տպավորությունները միշտ կմնան նրանց հուշերում:

ՄԱՍ-ՌԵՍՏԼԻՆԳԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

Մայիսի 3-ին և 4-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրում տեղի ունեցավ մաս-ռեստլինգի միջուսանողական առաջնությունը:

Մրցույթը կազմակերպել էր մաս-ռեստլինգի աշխարհի մրցանակակիր, նաև նույն մարզաձևի ՀՀ չեմպիոն, Հայաստանի մաս-ռեստլինգի ֆեդերացիայի ներկայացուցիչ և ՀՀ ոստիկանության կրթահամալիրում պարեկային ծառայությունում պաշտոնի նշանակման նպատակով անցկացվող դասընթացի հատուկ պատրաստականության դասախոս Յուրի Սաքունցը:

Մաս-ռեստլինգ մարզաձևը, ունենալով մի քանի տարվա պատմություն, արդեն հասցրել է աշխարհի չեմպիոններ գրանցել: Կրթահամալիրի սովորողներն առաջին անգամ ուժերը փորձեցին այս մարզաձևում և պատվով հաղթահարեցին մրցույթը:

Առաջնության իգական սեռի ներկայացուցիչները բացարձակ քաշային կարգում հաջողություններ գրանցեցին. առաջին հորիզոնականն զբաղեցրեց Դիանա Ղազարյանը, երկրորդը՝ Հասմիկ Մուրադյանը, երրորդը՝ Քրիստինե Միքայելյանը:

Արական սեռի ներկայացուցիչները տարբեր քաշային կարգերում ունեցան հետևյալ արդյունքները՝ 60 կգ քաշային կարգում առաջին հորիզոնականը նվաճեց Արտուշ Հովհաննիսյանը, երկրորդը՝ Հովհաննես Մկրտչյանը, երրորդը՝ Մուշեղ Խաչատրյանը, 70 կգ քաշային կարգում առաջին տեղն զբաղեցրեց Վարազդատ Գևորգյանը, երկրորդը՝ Հովհաննես Սարգսյանը, երրորդը՝ Էդիկ Սուսունցը, 80 կգ քաշային կարգում առաջինը՝ Վահրամ Նավոյանը, երկրորդը՝ Տիգրան Թադևոսյանը, երրորդը՝ Արսեն Հովհաննիսյանը: Մինչև 95 կգ քաշային կարգում առաջին հորիզոնականն զբաղեցրեց Անդրանիկ Հարոյանը, երկրորդը՝ Վահրամ Հակոբյանը, երրորդը՝ Դավիթ Ներսիսյանը, 95 և ավել կգ քաշային կարգում առաջին հորիզոնականը նվաճեց Գևորգ Զոհրաբյանը, երկրորդը՝ Արծրուն Ռտոյանը, երրորդը՝ Նորայր Սահակյանը:

Լավագույն արդյունքներ գրանցած բոլոր մասնակիցները մայիսի 7-ին պարգևատրվեցին պատվոգրերով և մեդալներով:

Շնորհավորում ենք մրցանակակիրներին՝ մաղթելով նորանոր հաջողություններ:

ՀԵՏԱՔՐՔՐՔՇԱՐԺ ՊԱՏՈՒՀԱՆ

ԱՆՏՈՆ ՉԵԽՈՎ. ԴԱՍՏԻԱՐԱԿՎԱԾ ՄԱՐԴՈՒ 8 ՀԱՏԿԱՆԻՇ

Ավելի քան հարյուր տարի առաջ ռուս հայտնի գրող Անտոն Չեխովն այս նամակը գրել է իր եղբորը, ով տաղանդավոր նկարիչ էր, բայց տառապում էր հարբեցողությամբ: Անտոնին շատ էր մտահոգում եղբոր հիվանդությունը, նրան զայրույթ էր պատճառում նաև եղբոր արհամարհական վերաբերմունքն իր տաղանդի հանդեպ: Ահա նրա զգացմունքային նամակը, որն անպայման պետք է ընթերցի յուրաքանչյուր մարդ: Սա նամակ է ոչ միայն հարբեցողությամբ տառապողների, այլև այն մարդկանց համար, ովքեր թուլություն են դրսևորում՝ խղճահարություն առաջացնելով ու արդարանալով, թե՝ մեզ ոչ ոք չի հասկանում: Այդպիսով նրանք վնասում են ոչ միայն իրենց, այլև հարազատ մարդկանց, ովքեր անտարբեր չեն նրանց նկատմամբ:

Հատված նամակից

Դու հաճախ ես բողոքում, որ քեզ ոչ ոք չի հասկանում: Նման բողոք նույնիսկ Գյոթեն ու Նյուտոնը չունեին: Բողոքում էր միայն Քրիստոսը, բայց ոչ թե սեփական «ես»-ի, այլ իր ուսմունքը չհասկանալու համար: Քեզ բոլորը հիանալի հասկանում են: Ուրիշ հարց է, որ դու ինքդ քեզ չես հասկանում, և դա մյուսների մեղավորությունը չէ:

Հավատացնում եմ քեզ, որ և՛ որպես եղբայր, և՛ որպես քեզ շատ հարազատ մարդ՝ հասկանում ու կարեկցում եմ քեզ:

Ես գիտեմ քո բոլոր լավ կողմերը հինգ մատիս պես ու գնահատում եմ դրանք: Եվ որպես ապացույց՝ կարող եմ թվարկել այդ հատկանիշները: Դու չափազանց բարի ես, մեծահոգի ու անկեղծ, նախանձությունն ու ատելությունն օտար են քեզ: Դու ի վերուստ օժտված ես տաղանդով, որը շատերը երազում են ունենալ և չունեն:

Քո միակ թերությունը քո անդաստիարակությունն է:

Իմ կարծիքով՝ դաստիարակված մարդիկ այսպիսին են՝

1. Նրանք հարգում են դիմացինին, այդ պատճառով հանդուրժող են, զիջող ու քաղաքավարի:

2. Նրանք չեն վիճում մուրճի կամ կորած իրերի պատճառով: Ներում են աղմուկը, ցուրտը, վառված ուտելիքը...

3. Նրանք կարեկցում են ոչ միայն մուրացկաններին ու կատուներին: Նրանք տառապում են այն բանի համար, ինչ սովորական անզեն աչքով տեսանելի չէ:

4. Նրանք հարգում են ուրիշի սեփականությունը, այդ պատճառով վճարում են պարտքերը:

5. Դաստիարակված մարդիկ անկեղծ են, վախենում են ստից այնպես, ինչպես կրակից: Սուտը վիրավորանք է լսողի համար և նվաստացնում է խոսողին: Նրանք փողոցում էլ ունեն նույն վարքագիծը, ինչ տանը: Շատախոս չեն, խոսակցության մեջ չեն ընկնում ու կարողանում են լռել:

6. Նրանք չեն ոչնչացնում իրենց ուրիշների մոտ խղճահարություն ու կարեկցանք առաջացնելու նպատակով: Երբեք չեն ասում. «Ինձ չեն հասկանում»:

7. Նրանք ճղճիմ չեն. չեն տարվում կեղծ ադամանդներով, ինչպես օրինակ՝ հայտնիների հետ ծանոթանալն է:

8. Նրանք իրենց մեջ սերմանում են էսթետիկան. չեն կարող քնել ու արթնանալ հագուստով: Նրանց հետաքրքրում է ոչ թե կինն անկողնում, ով կարող է կեղծ հղիության լուրեր տարածել ու անվերջ ստել, այլ թարմությունը, շնորհն ու մարդկայնությունը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԵՎ ՔՈԼԵՋԻ 2021/2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիան իրականացնում է բակալավրի կրթական ծրագրով «Իրավագիտություն» մասնագիտությամբ «Իրավագիտության բակալավր» որակավորմամբ առկա ուսուցման ձևով ուսուցում: Ուսման տևողությունը 4 տարի է: Շրջանավարտներին շնորհվում է «ոստիկանության լեյտենանտ» կոչում, և նրանք նշանակվում են ՀՀ ոստիկանության համապատասխան ծառայությունների միջին խմբի պաշտոններում:

2. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջն իրականացնում է միջին մասնագիտական կրթական ծրագրով «Ոստիկանական գործ» մասնագիտությամբ «ոստիկանության սպա» որակավորմամբ առկա ուսուցման ձևով ուսուցում: Ուսման տևողությունը 2 տարի է: Շրջանավարտներին շնորհվում է «ոստիկանության լեյտենանտ» կոչում, և նրանք նշանակվում են ՀՀ ոստիկանության համապատասխան ծառայություններում՝ տեսուչի պաշտոններում:

3. Ուսուցումն իրականացվում է պետական պատվերի շրջանակներում /անվճար/: Սովորողները համարվում են ՀՀ ոստիկանության ծառայողներ, և նրանք ուսման ողջ ժամանակահատվածում վարձատրվում են՝ Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձի չափով:

Ընդունելության կարգին և պայմաններին կարող եք ծանոթանալ ոստիկանության www.police.am կամ կրթահամալիրի www.edupolice.am կայքերում:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրում 2018 թվականից գործում է իրավաբանական կլինիկա:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի իրավաբանական կլինիկայում անվճար իրավաբանական խորհրդատվություն է տրամադրվում քրեական և քաղաքացիական հարցերով:

Իրավաբանական խորհրդատվությունը տրամադրում են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի համապատասխան ուսուցում ստացած սովորողները՝ իրավաբանական կլինիկայի փաստաբանի հետ համաձայնեցնելուց հետո:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի իրավաբանական կլինիկայում քաղաքացիների ընդունելությունը կազմակերպվում է յուրաքանչյուր աշխատանքային չորեքշաբթի՝ ժամը 15:00-ից մինչև 17:00-ը:

Խորհրդատվություն ստանալու համար կարող եք այցելել ՀՀ ոստիկանության կրթահամալիրի իրավաբանական կլինիկայի գրասենյակ՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի պողոտա 29, կամ հարցերն ուղղել legalclinic2018@mail.ru էլեկտրոնային հասցեով:

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ոստիկանության կրթահամալիր ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73:
Գրանցման վկայական՝ 29021003884:

Տպագրվել է «Տիգրան Մեծ» ՓԲԸ-ում՝ Արշակունյաց 2:
Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:
Ստորագրված է տպագրության 31. 05. 2021թ.:
Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի:
Գլխավոր խմբագիր՝ Ռ. Մուսայելյան:
Պատասխանատու քարտուղար՝ Արուսյակ Քոչարյան: